




Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ԳԼՈՐԳ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ աննասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապէս եւ Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Գերապատիւ Առաջնորդաց ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական:

Որպէս ցարդ լինի, ըստ տրամադրութեան օրինաց եւ դրութեանց Տ. Նախարարին Ներքին Գործոց եւ Տ. Փոխարքային Կովկասու, վասն ուսուցչաց Գէորգեան Հոգեւոր ձեմարանի եւ թեմական Հոգեւոր դպրանոցաց Հայոց եւ վասն ուսուցչաց միջնակարգ եւ տարրական պետական դպրոցաց, ի նոյն օրինակ յետ այսորիկ պահանջի ստանալ զհամաձայնութիւն նահանգապետաց վասն նշանակելոյ գնորդ ուսուցիչս յեկեղեցական-ծխական դպրոցս մեր: Ուստի այսու

Կոնդակով Մերով առաջադրեմք գերապատուութեանդ ընթանալ համաձայն պահանջման օրինաց:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Ի 10 մարտի 1913 ամի

Ըստ Տոմարիս Ռէկի

Ի Հայրապետութեան Մերում Բ. ամի

յԱրարատեան Մ. Աթոռ ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

թ. 418—422

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻԻՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՏՆՅՐԷՆՈՒԹԻԻՆՆԵՐԻՅ

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Կ. Պօլսի Հայոց Պատրիարքին յայտնել պ. Բարսեղ Իսթանպօլուեանին, թէ իւր գրաւոր խնդրի համաձայն, Նորին Սրբութեան կոնդակով արձակուած է Մայր Աթոռի գանձապահութեան պաշտօնից: 12 յունիսի, թ. 899:

Կոնդակ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքի անուանով՝ որով տառերի գիւտի 1500-ամեայ և Հայ տպագրութեան 400-ամեայ Մեծ Յոբելեանի առթիւ յանձնարարուեց զպրոցական զրամագլխի հիմք դնել՝ Ազգային Ժողովի հովանաւորութեան ներքոյ: 12 յունիսի, թ. 900:

Կոնդակ հանդուցեալ Սարգիս Խոճեանի կտակակատարներին անուանով, որով յանձնարարուեց փոխադրել հանդուցեալի կտակագումարը Նորին Սրբութեան անուանով՝ ս. Սինոդի գանձարանում պահելու և տոկոսները եկեղեցական ծխական դպրոցների օգտին զործադրելու համար: 13 յունիսի, թ. 903:

Կոնդակ գերաշնորհ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց շնորհունակ Տ. Գէորգ սարկաւադ Զէօրէկչեանին արեղայ ձեռնադրել, իսկ անդրանիկ պատա-